աշխատանքի լուման ձգել են Գլաձորի գրչութեան շատ ներկայացուցիչներ. բազմաթիւ մանր յիշատակարաններ տալիս են մեզ այդ մասին բաւարար չափով տեղեկութիւն. օրինակի շնորհողն է 34բ. «երջանիկ բարունապետս մեր», ուրիշ տեղ անունով յիշուած 312ա. «Զմեծ բարունապետն զԵսայի և զհետևող նորին զԿիրակոս վարդապետն, ընդ նոցին և զմեղաւոր հողս Տիրացու գրիչ աղաչեմ»(*)։ Կիրակոս ինքն էլ ԺԴ. դարի առաջին կիսի նշանաւոր գրիչներից և վարդապետներից մէկն է, որ իւր եղբօրորդի Յովհաննէսի հետ բազմաթիւ ձեռագիրներ ունի գրած և երկար ժամանակ ուսուցչութիւն է արել յատկապէս իւր հայրենիքում Երզնկայում (Յաւել. Բ. 80)։ Ե՞րբ է եկել Գլաձոր, չգիտենք. բայց այս թուականին արդէն «վարդապետ» (259ա.) կամ «բարունի» 205ա., մի տեղ մինչև իսկ «բարունապետ» է կոչւում։ Նորա եղբօրորդին Յովհաննէսը դեռ ևս սարկաւագ, բայց Գլաձորի ամենանշանաւոր գրիչներից մէկը (պատկ. 209), որի մասնակցութիւնը տեսանք Լամբրոնացու Սաղմոսաց մեկնութեան մէջ Եսայի Նէեցու համար(**), իսկ այստեղ Կիրակոս նորա համար գրում է «զանձն ի յաշխատանս եդ ջանակից լինել մեզ՝ մանաւանդ թէ զյոլով մասն սա գրէ»։ Բացի նորանից այս Աստուածաշնչի գրչութեան մէջ օգնել են նաև Կարապետ երէց որդի Գրիգորի և Հազրեւարդի (254ա), բայց մանաւանդ Թորոս գրիչ եւ նկարիչ Տարօնեցի, որ յիշւում է շատ տեղ 57բ. «Զապիկար ծրողս յիշեցէք ի տր.». այս կարճ յիշատակարանի տակ կարմրագեղով աւելացրել է «եւ զԹորոս նկարագրաւղ». Ղուկասի պատկերի տակ 534բ. «Զանարժան զրիչ Թորոս յիշեա ի տր. Ցս. Քս.». Յովհաննու և Պրոխորոնի պատկերի տակ 565բ. «Զսբ. պատկերաց նկարագրօղս զԹորս. յիշեա ի տր. Ցս. Քս.»։ Կիրակոս ինքն էլ մի քանի տեղ յիշում է նորան 205ա, 368ա։ Յիշուած է նաև մի Մովսէս 611ա., հաւանօրէն նոյն «Մովսէս բեմբական»ի հետ (Յաւել. Բ. 66)։

«Զ՝Մովսէս մեռեալ ողի
Վ՝ըշտաւք բազում պատեալ զերի.
Յիշման առնել միշտ արժանի
Ասել թէ տր. ողորմեսցի»։



Պատկեր 208.

Վերջապէս յիշում է «Յակոբոս սրբասնունդ կրաւնաւոր. . . որ զչիքերոնս շնորհեաց» 135ա, հաւանօրէն Յակոբ Թագորցին է սա, որի մասին՝ քիչ յետոյ(*)։

(*) Կարծում ենք այն Տիրացուն է սա, որ կոկել էր 1291 թուին № 1369/1363 ձեռագիրը և դեռ ևս անվարժ ձեռք ունէր։

(**) Ձեռ. Էջմ. № 1844 Երևանի Կաթուղիկէ եկեղեցուց բերուած։

(*) Կարծում ենք այն Տիրացուն է սա, որ կոկել էր 1291 թուին № 1369/1363 ձեռագիրը և դեռ ևս անվարժ ձեռք ունէր։

(**) Ձեռ. Էջմ. № 1844 Երևանի Կաթուղիկէ եկեղեցուց բերուած։

(*) Կիրակոս Երզնկացին և Յովհաննէս եղբօրորդին 1318 թուին ևս դեռ Գլաձորումն են, ինչպէս կը տեսնենք նրանց գրած ձեռագիրների յիշատակարաններից, բայց 1324 թուին արդէն վերադարձել են հայրենիք. «Ի թվ. ՉԼԳ (= 1324) ես Կիւրակոս վարդապետս բնակեցա ի լերինս սբ. Լուսաւորչիս» (Ձեռ. Էջմ. № 2329, 302բ.)։ Ձեռագիրը եղել է սեպհականութիւն Երզնկացի գրասէր Ահարոն վարդապետի (+ ՉԿԵ, յաւելոստոս ժբ.), որ յետոյ անցել է Կիրակոսի ձեռքը, որպէս զպրոցի ղեկավարի։ Նորա դասատուութեան մասին իւր եղբօրորդի Յովհաննէսի հետ, որ այժմ վարդապետ է, տեղեկութիւն ունինք 1334 թուին (Ձեռ. Էջմ. № 1402/1379, 271բ. 354բ). «Զսատացող գրոցս զերջանիկ և զանհուն բարունապետն զԿիրակոս և զեղբաւրորդին իւր զՅովհաննէս վարդապետ և զծնաւղսն նոցա յիշեցէք ի Քս. ամէն»։ Ձե-